# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380386

√ 10/6955-13
21.11.2013թ

«Հարկ վճարողների պաշտպանություն» հ/կ-ի
նախագահ պարոն Փ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2013թ. նոյեմբերի
11-ի Ե-018 թվակիր գրության

Հարգելի պարոն Թադևոսյան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն ուսումնասիրել է Ձեր գրությունում բարձրացված հարցը, որի վերաբերյալ հայտնում ենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումներ կարող է տալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը՝ ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարությունը չի հանդիսանում «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը կիրառող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը, հետևաբար Ձեր կողմից բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար Դուք կարող եք դիմել հիշյալ ակտը կիրառող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**Օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչության պետ՝** **Կ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Կատարող՝ Օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչություն
Է. Մադոյան, հեռ. 380-227